

Հաստատում եմ՝

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

նեկող՝ մ.գ.դ.

Ա.Մ. Ծատուրյան

06 2026 թ.



ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Քրիստինե Արայի Բաբայանի «Իսպաներենի երկրագիտական բառապաշարի ուսուցման մեթոդական համակարգը» խորագրով ԺԳ.00.02 – «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (իսպաներեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Քրիստինե Արայի Բաբայանի «Իսպաներենի երկրագիտական բառապաշարի ուսուցման մեթոդական համակարգը» թեմայով ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի «Մանկավարժության և հոգեբանության» և «Օտար լեզուների և գրականության» ամբիոնների համատեղ նիստում (Արձ. թիվ 22, կայացած՝ 10.06.2026թ.):

Մասնակցում էին «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի մ.գ.դ., պրոֆեսոր Պ. Գևորգյանը, մ.գ.թ., դոցենտներ Լ. Բաղդասարյանը, Ա. Հարությունյանը, Ա. Հովհաննիսյանը, Ք. Վիրաբյանը, Լ. Դանիելյանը, Լ. Մարությանը, ավագ դասախոս Ա. Ստեփանյանը, մ.գ.թ. Ն. Հովհաննիսյանը, հ. գ. թ. դոցենտներ՝ Ն. Կոստանդյանը, Վ. Միրզոյանը, Մ. Մազմանյանը, Մ. Շահվերդյանը, դասախոսներ Տ. Մալումյանը, Ն. Հովսեփյանը, Ա. Խաչատրյանը:

«Օտար լեզուների և գրականության» ամբիոնի բ.գ.թ., դոցենտներ՝ Թ. Թադևոսյանը, Կ. Առուստամյանը, Ն. Զադինյանը, ավագ դասախոսներ Ա. Սիմոնյանը, Ք. Ղազարյանը, մ.գ.թ., դոցենտ՝ Ա. Պապոյանը, դասախոսներ՝ Ա. Հարությունյանը, Գ. Մատինյանը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսությանը կցված է նաև հավելված:

Թեմայի արդիականությունը հիմնավորվում է նրանով, որ Հայաստանում օգտագործվող երկրագիտության դասագրքերը հիմնականում ստեղծվում են արտերկրում և հաշվի չեն առնվում հայերենի, հայախոս ուսանողների և Հայաստանի պատմամշակութային իրողությունները: Հետազոտության վարկածի համաձայն՝ երկրագիտական բառապաշարի հայերեն, իսպաներեն և անգլերեն զուգադրական-տիպաբանական կտրվածքով բառապաշարի ուսուցման համակցված մոդելի ներդրումը կնպաստի ուսումնական գործընթացի արդյունավետությանը:

Ատենախոսության առաջին՝ «Լեզվաերկրագիտական իրազեկության զարգացման առանձնահատկությունները լեզվական բուհում» գլխում, որն ունի երեք ենթագլուխ, դիտարկվում են Իսպանիայի երկրագիտության բուհական դասընթացի առանձնահատկություններն արդի փուլում, օտար լեզուների ֆակուլտետում դասավանդվող «Իսպանիայի երկրագիտություն» դասընթացի հիմնական բաղադրամասերը, հանրամշակութային իրույթների ուսուցումը և տիպաբանական բնութագիրը «Իսպանիայի երկրագիտության» մասնագիտական դասընթացում:

Առաջին ենթագլխում երկրագիտությունը դիտարկվում է որպես բուհում հաղորդակցական կարողության զարգացման անկյունաքար: Տեքստը շեշտադրում է անցումը զուտ տեղեկատվական ուսուցումից դեպի միջմշակութային հաղորդակցություն, որտեղ լեզուն և մշակույթը դիտարկվում են որպես մեկ միասնություն: Տարբերակվում են «երկրագիտություն» և «լեզվաերկրագիտություն» հասկացությունները: Ամփոփվում են թեմայի շուրջ կատարված գիտական մոտեցումները, որոնք երկրագիտությունը բաժանում են պրագմատիկ, արժեքաբանական և ճանաչողական ասպեկտների:

Ներկայացվում են լեզվի ուսուցման հայեցակարգային փոփոխությունները՝ անցում զուտ տեսական ուսուցումից դեպի հաղորդակցական կարողության զարգացում, ինչը ենթադրում է, որ ուսանողը ոչ միայն պիտի իմանա բառերի նշանակությունը, այլև հասկանա դրանց մշակութային համատեքստը: Հեղինակը կարևորում է նաև հաղորդակցական վարքագիծը: Այս գլխում ներկայացվում են հարցումների

արդյունքներ, որոնք պարզաբանում են ուսանողների՝ «Իսպանիայի երկրագիտություն» սովորելու դրդապատճառներն ու միտումները: Ենթագլխի զգալի մասը նվիրված է Զ. Բանկսի կողմից առաջարկված բազմամշակութային կրթության մոդելի քննարկմանը:

Հեղինակն առաջարկում է կիրառել բնագրային տեքստերի և նյութերի վրա հիմնված «լեզվաերկրագիտական թղթապանակ» և զարգացնել երեք տիպի հմտություններ՝ ընկալողական, վերարտադրողական, արտադրողական: Տեքստը փաստում է, որ Հայաստանում իսպաներենի ուսուցումը պետք է դուրս գա զուտ լեզվական կադապարներից և ավելի սերտորեն ինտեգրի երկրագիտական բաղադրիչը՝ օգտագործելով ժամանակակից մեդիա ռեսուրսները և բազմամշակութային կրթության մոդելները:

Հեղինակը ներկայացնում է դասընթացի թեմատիկ բազմազանությունը՝ անդրադառնալով Իսպանիայի աշխարհագրության և պետական կառուցվածքին, պատմական ժամանակագրությանը, երկրի քաղաքական կյանքին, մշակութային և կենցաղային իրողություններին: Պատկերվում է նաև իսպանացիների հոգեբանական դիմանկարը, կարևորվում է խոսքային վարվեցողության հետևողական ուսուցումը, ինչպես նաև իսպանացիներին բնորոշ ժեստերի լեզուն: Ասվածով հեղինակը հիմնավորում է, որ օտար լեզվով հաղորդակցական կարողության զարգացումը ենթադրում է նախևառաջ համապատասխան սոցիալ-մշակութային գիտելիքների և ունակությունների յուրացում:

Այս համատեքստում հեղինակը հատուկ ուշադրություն է դարձնում լակունաների խնդրին՝ դրանք դիտարկելով որպես միջմշակութային հաղորդակցության կարևոր բաղադրիչ: Հիմնավորվում է, որ լակունաները պայմանավորված են տարբեր ժողովուրդների պատմական, մշակութային և սոցիալական փորձի տարբերություններով և կարող են զգալի դժվարություններ առաջացնել օտար լեզվի ուսուցման գործընթացում:

Հեղինակը կարևորում է հայալեզու ուսանողների համար մշակութային նշանների և խորհրդանիշների տեսանելիությունը: Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար առաջարկվում է համեմատական վերլուծություն, ակտիվ ներգրավվածություն, խմբային աշխատանք, բլից հարցումներ:

Երկրորդ գլուխը՝ «Իսպաներենի դասընթացի միջոցով երկրագիտական բառապաշարի ուսուցման մեթոդական հիմունքները» խորագրով, կազմված է չորս ենթագլխից:

«Իսպաներենի երկրագիտական բառապաշարի ուսուցման մեթոդական հիմունքները» բաժնում հեղինակը, հիմնվելով հարուստ փաստական նյութի վրա, խոսում է ուսուցման ժամանակակից մեթոդների մասին՝ անդրադառնալով «Նախագծային մեթոդին», որը թույլ է տալիս խուսափել բառերի պարզունակ թարգմանությունից և անցնել իմաստային ու համատեքստային յուրացմանը: Առանձնացնում է «CLIL» (Content and Language Integrated Learning) մեթոդի չորս բաղադրիչները, որոնք հնարավորություն են տալիս լեզվական հմտությունների զարգացումը զուգակցել մասնագիտական գիտելիքների ձեռքբերմանը: Նշվում է նաև «Խճանկար» մեթոդը, որը համագործակցային ուսուցման ամենաարդյունավետ ակադեմիական ռազմավարություններից մեկն է և ունի խոր դիդակտիկ հիմնավորում: Բառապաշարի հարստացման և ստեղծագործական ինքնարտահայտման համար առաջարկվում է «Ջնջման արվեստ» մեթոդը: Հեղինակը իսպաներենի երկրագիտական բառապաշարն անհրաժեշտ է համարում ուսումնասիրել քերականության, ոճաբանության և նրա ձևավորման արտալեզվաբանական գործոնների տեսանկյունից:

Նյութը համապարփակ ուղեցույց է իսպաներենի բառաշերտերի, դրա ծագման և ուսուցման առանձնահատկությունների վերաբերյալ:

Աշխատանքի արժեքավոր հատված է հավելվածը, որն իսպաներենի երկրագիտության դասերի համար կարող է հիմնարար աղբյուր ծառայել:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը, արտացոլում է նրա հիմնական դրույթները:

Ատենախոսն ունի 8 գիտական հոդված:

Արժևորելով ատենախոսի կողմից կատարած գիտական աշխատանքը՝ հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառում.

1. Հեղինակը մինչև «բառապաշար» եզրույթի սահմանում տալն անդրադառնում է բառապաշարի ուսուցման նպատակներին և զարգացման մեթոդներին: Նպատակահարմար կլիներ սահմանումը ներկայացնել տվյալ ենթաբաժնի սկզբում:

2. Առաջին գլխի երկրորդ ենթագլխում խզված է տրամաբանական կապը: Առանձին բաժինները բովանդակային առումով փոխկապակցված են, սակայն որոշ հատվածներում նկատվում են թեմատիկ կտրուկ անցումներ, որոնք բավարար չափով չեն հիմնավորվում և թուլացնում են բաժնի ամբողջականությունը: Կարծում ենք՝ 77-րդ էջում հեղինակի կողմից առաջադրված սկզբունքները ճիշտ տեղում չեն. ընդհատվում է տեքստի տրամաբանական շարադրանքը:

3. 71-րդ էջում «Ջնջման արվեստի» մասին խոսելիս, բացի տեսողական պատկերներից, կարելի էր նաև գրավոր օրինակների միջոցով մեթոդի արդյունավետությունն ավելի հստակ ներկայացնել:

4. Կան եզրույթների գործածման ոչ միօրինակ ձևեր, օրինակ՝ *spanglish* տերմինը որոշ էջերում գրված է անգլերեն, մյուսներում՝ հայերեն (սպանգլիշ կամ սպենգլիշ): Նույն եզրույթի համար օգտագործվում են և՛ «մշակութային իրազեկվածություն», և՛ «մշակութային տեղեկացվածություն» ձևերը: Ինչպես նաև 123-րդ էջում պահպանված չէ ֆիլմերի վերնագրերի գրության միօրինակությունը: Պահպանված չէ նաև վարժությունների պահանջների միօրինակությունը: Հեղինակը պահանջը ձևակերպում է մե՛կ երկրորդ եզակի դեմքով, մե՛կ երկրորդ հոգնակիով, մե՛կ երրորդ դեմքով (հարգալից դիմելածն):

5. 91-րդ էջում «California» բառի մեկնաբանությունը անհասկանալի է, նշված չէ նաև բացատրության աղբյուրը:

6. Առկա են բազմաթիվ տեխնիկական վրիպակներ, նույնիսկ իսպաներեն արտահայտություններում, որոնք, համաձայն իսպաներենի հնչյունական, կետադրական և շեշտադրական կանոնների, կարող են հանգեցնել քերականական սխալների: Օր.՝ *¿Cómo no pregunte usted por la ría?* (պետք է լինի՝ *pregunta*): Չակերտների օգտագործման կանոնները պահպանված չեն. անկյունային չակերտների փոխարեն օգտագործված են կրկնակի չակերտներ, որոնք իսպաներենում գործածվում են անկյունային չակերտների մեջ:

7. Նկատվում են նաև մեջբերումների ձևաչափային անհարթություններ: Օր.՝ (Шамов 2005: 357-358) և (Шатилов 1991):

8. Առկա են նաև ուղղագրական սխալներ: Օր.՝ «flamenco» բառը մեծատառով է գրված, մինչդեռ այդտեղ այն հատուկ անվան մաս չի կազմում:


9. Հեղինակը հղում է տվել Վիքիպեդիային, ինչը գիտական աշխատություններում ընդունելի չէ:

Ընդհանուր առմամբ աշխատանքը համապատասխանում է գիտական աստիճանաշնորհման պահանջներին: Իսկ վերոնշյալ դիտարկումները նպատակ ունեն աշխատանքի որակը հետագայում ավելի բարելավելու:


Եզրակացություն

Հետազոտության թեմայի արդիականությունը, տեսական և գործնական նշանակությունը, գիտական նորույթը, ձեռք բերված արդյունքների հիմնավորվածությունը թույլ են տալիս եզրակացնել, որ Քրիստինե Արայի Բաբայանի «Իսպաներենի երկրագիտական բառապաշարի ուսուցման մեթոդական համակարգը» թեմայով ատենախոսությունը համակարգված ինքնուրույն, ավարտուն աշխատանք է, համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02. «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (իսպաներեն լեզու) մասնագիտական թվանիշին, իսկ ատենախոսն արժանի է հայցվող մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Մանկավարժության և հոգեբանության

ամբիոնի վարիչ՝ /  /մ.գ.թ., դոցենտ Լ.Գ. Բաղդասարյան

Օտար լեզուների և գրականության

ամբիոնի վարիչ՝ /  /բ.գ.թ., դոցենտ Թ.Վ. Թադևոսյան

Լ. Բաղդասարյանի և Թ. Թադևոսյանի ստորագրությունները հաստատում են

ՎԴՀ-ի գիտքաբերության

մ.գ.թ., դոցենտ Ս.Ս. Բեժանյան

